«05» դեկտեմբերի 2025թ.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և Ղոռլաբ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշման 12-րդ հավելվածի 9-րդ կետի պահանջները և հաշվի առնելով, որ 19.09.2025թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2025/33Հ պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված Տ-7-48, Գյումրի(Տ-7-58)-Արևիկ-Այգեբաց-Վարդաքար-/Հ-21/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ10+440 հատվածի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, կապված այլ ենթակառուցվածքների (էլեկտրական սյուներ, կոյուղագծեր, ջրագծեր) վերատեղադրման, նորոգման կամ տեղափոխման հետ և այդ խնդիրներով պայմանավորված ճանապարհի որոշ հատվածներում նախատեսված աշխատանքները ձգձգվել են և սահմանված ժամկետներում չեն իրականացվել, ինչը նպաստել է աշխատանքների կատարման ժամկետի, այդ աշխատանքների մասով, երկարաձգման, իսկ ներկայիս եղանակային պայմանները արդեն իսկ հնարավորություն չեն տալիս շարունակել ասֆալտապատման աշխատանքները՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 28-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի 462-րդ կետի պահանջները, համաձայն որի օրգանական կապակցանյութերով ամրացված գրունտներից հիմքերն ու ծածկերը թույլատրվում է տեղադրել չոր եղանակին, օդի 10^0 C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում, ինչպես նաև այն, որ տվյալ շինարարական աշխատանքները իրականացնող կապալառուի հետ 05.12.2025թ.-ին կնքվել է 1,035,293,211 ՀՀ դրամ գումարի չափով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նվազեցնելու մասին համաձայնություն, ուստի նկատի ունենալով, որ վերոհիշյալ շինարարական աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունները մատուցվում են Ղոռլաբ» ՍՊԸ-ի կողմից, Կողմերը կնքեցին սույն համաձայնությունը հետևյալի մասին.

1. Պայմանագրով Տ-7-48, Գյումրի(Տ-7-58)-Արևիկ-Այգեբաց-Վարդաքար-/Հ-21/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ10+440 հատվածի հիմնանորոգման նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար սահմանված ընդհանուր գնից՝ 8,513,000 ՀՀ դրամի չափով գումարի նվազեցման նպատակով Պատվիրատուն ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացնի համապատասխան իրավական ակտի նախագիծ: